

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2015 թվականի հունիսի 25-ի թիվ 8 նիստի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ <<ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ-3>> ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ ԲՈՀ-ԻՆ ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԵՊՀ <<Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր-3>> ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 3-րդ գիտաժողովի նյութերի ժողովածուում ընդգրկված աշխատանքների հրատարակման վերաբերյալ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի դրական եզրակացությունն ու միջնորդությունը, ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 49-րդ կետի 15-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կողմից հրատարակվող <<Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր-3>> ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 3-րդ գիտաժողովի նյութերի ժողովածուն ընդգրկելու ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: